ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
PRESIDENT OF THE CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՋԻԱՆԻ ԲՈՒՔԻՔԻՈՅԻՆ

Հարգարժան պարոն նախագահ,

Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը մշտապես եղել է իրավունքի գերակայության եւ ժողովրդավարական արժեքների արմատավորման առաջամարտիկը ոչ միայն եվրոպական մայրցամաքում, այլեւ միջազգային առումով: Եվ համոզված եմ, որ Ձեզ չի կարող չվրդովեցնել եվրոպական իրավական դաշտում վերջին օրերին արձանագրված աննախադեպ զավեշտը, որը ոչ միայն անհամատեղելի է եվրոպական իրավական արժեքների հետ, այլեւ չափազանց վտանգավոր նախադեպ է՝ իրավունքն անհեռատես քաղաքականությանը ծառայեցնելու եւ իրավունքի գերակայության սկզբունքը ոտնահարելու առումով:

Փաստն այն է, որ Հունգարիայում, ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպված ուսումնական դասընթացների օրերին, գիշերով, քնած ժամանակ ազգային թշնամանքի հողի վրա հայ սպային կացնահարած ու հունգարական արդարադատության կողմից 2006 թվականին ցմահ ազատազրկման դատապարտված Ռամիլ Սաֆարովն օրերս Հունգարիայի կառավարության կողմից հանձնվել է Ադրբեջանին, եւ նա ոչ միայն անմիջապես ազատ է արձակվել, այլեւ պետական մակարդակով այդ երկրում մարդասպանին հերոսացնելու մի աննախադեպ գործընթաց է սկսվել:

Տեղի ունեցածը մարտահրավեր է եվրոպական իրավական ու բարոյական արժեքներին, եւ միջազգային որեւէ հեղինակավոր իրավական կառույց դրա կողքով անտարբեր անցնել չի կարող: Ուստի ակնկալում ենք նաեւ Ձեր սկզբունքային ու համարժեք արձագանքը:

Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի անդամ,
ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ՝ **Գ. Հարությունյան**

06.09. 2012թ.

10, M. Baghramyan av., Yerevan, 0019. Tel.: (374.10) 52 96 55, Fax 52 67 64, E-mail: armlaw@concourt.am.